

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՆՈՐՎԻԿ»
ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ
Բաժնետերերի Ընդհանուր
Ժողովում

2008 թվականի հունիսի 16-ի
Արձանագրություն թիվ 01-08

Գործադիր տնօրեն՝

Տիգրան Բոստանջյան



ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3

գրանցման թիվ _____
« 19 » *դեկտեմբեր* 2008 թ.
վկայական *14*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Արթուր Ջավադյան



**«ՆՈՐՎԻԿ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրություն)**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ..... 3

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 4

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ..... 4

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ..... 5

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ..... 5

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 12

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ..... 13

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ..... 14

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ..... 14

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Նորվիկ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 04.07.2006թ.՝ միակ բաժնետիրոջ համապատասխան որոշման (07.04.2006թ. թիվ 58A/2006) համաձայն:
- 1.2. Ընկերությունն միակ բաժնետերն է հանդիսանում «Նորվիկ Բանկ» բաժնետիրական ընկերությունը (Լատվիա):
- 1.3. Ընկերության ֆիրմային անվանումն է.
 - 1.3.1. լրիվ՝

հայերեն՝	«Նորվիկ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝	Закрытое акционерное общество Универсальная кредитная организация “Норвик”
անգլերեն՝	“Norvik” closed joint-stock company universal credit organization
 - 1.3.2. կրճատ՝

հայերեն՝	«Նորվիկ» ՈւՎԿ ՓԲԸ
ռուսերեն՝	ЗАО УКО “Норвик”
անգլերեն՝	“Norvik” UCO cjsc
- 1.4. Ընկերությունը ունի իր ֆիրմային անվանմամբ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր:
- 1.5. Ընկերության իրավաբանական և փոստային հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Խանջյան 41:
- 1.6. Ընկերության ստեղծման և գործունեության հիմնական նպատակն է հանդիսանում իր կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների միջոցով շահույթի ստացումը:
- 1.7. Ընկերության գործունեությունն իրականացվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից 04.07.2006թ. տրված թիվ 14 գրանցման վկայականի և լիցենզիայի հիման վրա: Ընկերության գործունեության ժամկետը սահմանափակված չէ:
- 1.8. Ընկերությունը հանդիսանում է իրավաբանական անձ, ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 1.9. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների, ինչպես նաև իր բաժնետերերի պարտավորությունների համար: Հայաստանի Հանրապետությունը, համայնքները և Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար, իսկ Ընկերության բաժնետերերն իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
- 1.10. Ընկերության բաժնետերերը և դեկավարները պատասխանատվություն են կրում իրենց

գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի, այդ թվում՝ սնանկության համար՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. Ընկերությունը ՀՀ օրենսդրությանը համապատասխան և օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ գործառնությունները՝
- ա) ներգրավել փոխառություններ և/կամ կնքել մմանատիպ գործարքներ.
 - բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.
 - գ) տրամադրել երաշխիքներ.
 - դ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել արժեթղթեր, կատարել նման այլ գործառնություններ.
 - ե) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ.
 - զ) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական).
 - է) գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.
 - ը) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).
 - թ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.
 - ժ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն.
 - ժա) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն.
 - ժբ) ՀՀ Կենտրոնական Բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններից բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

- 3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,314,040.000 (մեկ միլիարդ երեք հարյուր տասնչորս միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ:
- 3.2. Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է 1,314,040 (մեկ միլիոն երեք հարյուր տասնչորս հազար քառասուն) սովորական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:
- 3.3. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 3.4. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է նվազեցվել՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

- 4.1. Ընկերության բոլոր բաժնետոմսերը հանդիսանում են հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր: Տեղաբաշխված յուրաքանչյուր հասարակ բաժնետոմս իր սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք (բացառությամբ այն դեպքերի, երբ քվեարկությունն իրականացվում է գումարային սկզբունքով):
- 4.2. Ընկերությունն իրավունք ունի իր անունից թողարկել և տեղաբաշխել պարտատոմսեր՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
- 4.3. Ընկերության պարտատոմսերը կարող են շրջանառվել ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
- 4.4. Սովորական բաժնետոմսի սեփականատերն իրավունք ունի՝
- ա) մասնակցել Ընկերության կառավարմանը՝ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով.
 - բ) մասնակցել շահույթի բաշխմանը, ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
 - գ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը՝ նախապատվության իրավունքի իրականացման հնարավորության մասին ծանուցումն ստանալուց հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում.
 - դ) նախապատվության իրավունքով ձեռք բերել Ընկերության մյուս բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը.
 - ե) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռին, հաշվետվություններին, Ընկերության տնտեսական գործունեությանը: Տեղեկատվությունը պետք է տրամադրվի բաժնետիրոջ գրավոր պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ձևով.
 - զ) բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
 - է) հանդես գալ առաջարկություններով բաժնետերերի ընդհանուր ժողովում.
 - ը) բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
 - թ) դիմել դատարան՝ Ընկերության կառավարման մարմինների կողմից ընդունված և գործող օրենսդրությանը հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
 - ժ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը.
- ժա) օգտվել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
- 4.5. Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԸ

- 5.1. Ընկերության կառավարման մարմիններն են՝
- ա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը.
 - բ) Ընկերության խորհուրդը.
 - գ) Ընկերության գործադիր տնօրենը:

5.2. **Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը**

- 5.2.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա բաժնետերերի ընդհանուր ժողովն է:
- 5.2.2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում.
- ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
 - բ) Ընկերության վերակազմակերպումը (խորհրդի ներկայացմամբ).
 - գ) Ընկերության լուծարումը.
 - դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
 - ե) Ընկերության խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
 - զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
 - է) Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը.
 - ը) Ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը.
 - թ) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
 - ժ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվետվության, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի հաստատումը.
 - ժա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.
 - ժբ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության միջոցով (խորհրդի ներկայացմամբ).
 - ժգ) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը (խորհրդի ներկայացմամբ).
 - ժդ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խորհրդի ներկայացմամբ).
 - ժե) Ընկերության խորհրդի անդամների և վերստուգողի վարձատրության պայմանների և ծախսերի հատուցման կարգի ու պայմանների որոշումը:
- 5.2.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում նաև հետևյալ հարցերը, որոնցով որոշումների ընդունումը ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Ընկերության խորհրդին.
- ա) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում.
 - բ) դուստր, կախյալ, հովիհնգային ընկերությունների, այլ կազմակերպությունների, առևտրային կազմակերպությունների միությունների ստեղծումը և մասնակցությունը դրանց, եթե դա ժողովի կողմից հաստատման ենթակա խոշոր գործարք չի հանդիսանում:

- 5.2.4. Տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է Ընկերության յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:
- 5.2.5. Անհետաձգելի հարցերի քննարկման նպատակով կարող է գումարվել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով: Արտահերթ ժողովի որոշումը կարող է ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:
- 5.2.6. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա կարգով անցկացված նիստ չի համարվում:
- 5.2.7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն.
- ա) Ընկերության հասարակ (տվորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.
 - բ) Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.
 - գ) Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի անդամները և գործադիր տնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.
 - դ) Ընկերության վերստուգողը.
 - ե) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):
- 5.2.8. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա և անհապաղ տրամադրվում Ընկերության հասարակ բաժնետոմսերի առնվազն 10 (տասը) տոկոսին տիրապետող և բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված բաժնետերերին: Ընկերությունը պարտավոր է բաժնետիրոջ պահանջով հնգօրյա ժամկետում նրան տեղեկանք տրամադրել բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:
- 5.2.9. Մույն կանոնադրության 5.2.7 կետում նշված անձինք ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցվում են ժողովի գումարումից առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ՝ նրանց համապատասխան գրավոր կամ բանավոր ծանուցում ուղարկելու միջոցով:
- 5.2.10. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50-ից (հիսունից) ավելի տոկոսին:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է Ընկերության բաժնետերերի նոր ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի

փոփոխություն չի թույլատրվում:

- 5.2.11. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրության 5.2.12 և 5.2.13 կետերում նշված հարցերով որոշումների:
- 5.2.12. Հետևյալ հարցերով ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով.
- ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
 - բ) Ընկերության վերակազմակերպումը.
 - գ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
 - դ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
 - ե) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.
 - զ) Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 (հիսուն) տոկոսը գերազանցող արժեքով, ինչպես նաև Ընկերության արդեն տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի 25 (քսանհինգ) և ավելի տոկոսը կազմող բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացումը:
- 5.2.13. Հետևյալ հարցերով ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի 2/3-ից.
- ա) Ընկերության լուծարումը.
 - բ) Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցումը:

5.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգը

- 5.3.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցող անձանց վերապահվում է օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը մասնակցելու հավասար իրավունք:
- 5.3.2. Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցում է միայն Ընկերության բաժնետեր իրավաբանական անձը՝ հանձինս վերջինիս կանոնադրությամբ համապատասխան լիազորություններով օժտված միանձնյա կառավարման մարմնի կամ անձի, ապա ելույթների հնարավորություն չի նախատեսվում, և կառավարման համապատասխան մարմինը կամ անձը, ուսումնասիրելով օրակարգում ընդգրկված հարցերը, գրավոր որոշում է կայացնում դրանց վերաբերյալ: Կայացված որոշման մեջ ներառվում են նաև այն տեղեկությունները, որոնք պետք է նախատեսված լինեն ժողովի արձանագրությամբ: Նշված կառավարման մարմինը կամ անձը կատարում է նաև ժողովի նախագահի և քարտուղարի պարտականությունները՝ ստորագրելով որոշումը:
- 5.3.3. Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին 5.3.2 կետում նշված բաժնետիրոջ ներկայացուցչից բացի մասնակցում են նաև այլ անձինք, կամ ժողովին մասնակցում է Ընկերության բաժնետեր իրավաբանական անձը՝ հանձինս վերջինիս կանոնադրությամբ համապատասխան լիազորություններով օժտված կողմից կառավարման մարմնի, ապա

ժողովում նախագահում է Ընկերության խորհրդի նախագահը, որը ժողովին մասնակցող անձանցից մեկին հանձնարարում է ժողովի քարտուղարի պարտականությունների կատարումը: Վերջինս ապահովում է արձանագրության վարումը, կազմում արձանագրությունը 2 (երկու) օրինակով, ստորագրում այն և ներկայացնում ժողովի նախագահի ստորագրմանը:

- 5.3.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը բացվում է ժողովի նախագահի համապատասխան հայտարարությամբ, որի ժամանակը պետք է համընկնի ընդհանուր ժողովի գումարման ծանուցման մեջ նշված ժամանակին:
- 5.3.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը փակվում է ժողովի նախագահի համապատասխան հայտարարությամբ:

5.4. Ընկերության խորհուրդը

- 5.4.1. Ընկերության խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ իր իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Ընկերության խորհրդի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված խորհրդի կանոնակարգով:
- 5.4.2. Ընկերության խորհուրդը կազմված է չորս անդամից, որոնց լիազորությունների ընդհանուր տևողությունը սահմանափակված չէ:
- 5.4.3. Ընդհանուր ժողովին Ընկերության խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 2 (երկու) տոկոսի բաժնետերերը, ինչպես նաև Ընկերության խորհուրդը:
- 5.4.4. Ընկերության խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները իրենց կազմից՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով: Ընկերության խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել՝ բացառությամբ այն դեպքի, երբ համատեղությամբ հանդիսանում է նաև Ընկերության գործադիր տնօրեն: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել խորհրդի նախագահին կամ ընտրել նոր նախագահ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով:
- 5.4.5. Ընկերության խորհրդի նախագահն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝
 - ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.
 - բ) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
 - գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.
 - դ) սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նախագահում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում:
- 5.4.6. Ընկերությունը վարում է խորհրդի անդամների ռեեստր՝ օրենքով սահմանված կարգով:
- 5.4.7. Ընկերության խորհրդի իրավասություններն են՝
 - ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը և Ընկերության քաղաքականությունների ու ներքին կանոնակարգերի հաստատումը.
 - բ) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը.
 - գ) Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.
 - դ) Ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը,

դրանց օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.

- ե) Ընկերության գործադիր տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների ու կարգի հաստատումը.
 - զ) Ընկերության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների, ինչպես նաև Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.
 - է) Ընկերության բաժնետոմսերի դիմաց միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
 - ը) սույն կանոնադրության 5.2.2 կետի (բ), (ժգ)-(ժզ) կետերով նախատեսված հարցերի ներկայացումը բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը.
 - թ) Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը՝ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով, եթե տեղաբաշխվող բաժնետոմսերը չեն կազմում Ընկերության արդեն տեղաբաշխված բաժնետոմսերի 25 (քսանհինգ) և ավելի տոկոսը, և դրանով պայմանավորված Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը կամ կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
 - ժ) Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.
 - ժա) Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված կարգով.
 - ժբ) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.
 - ժգ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
 - ժդ) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.
 - ժե) Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 (քսանհինգ) - 50 (հիսուն) տոկոսը կազմող արժեքով խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացումը.
 - ժզ) շահագրգռվածության առկայության դեպքում գործարք կնքելու մասին որոշման կայացումը.
 - ժէ) Ընկերության տարեկան հաշվետվության նախնական հաստատումը.
 - ժը) Ընկերության վերստուգողի կողմից իրականացվող ստուգումներին հատուկ մասնագետների ներգրավմանը հավանություն տալը:
- 5.4.8. Ընկերության խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը առնվազն 3 (երեք) ամիսը մեկ՝ իր նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամի, Ընկերության գործադիր տնօրենի, վերստուգողի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 5 (հինգ) կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ պահանջով:
- 5.4.9. Խորհրդի նախագահը և/կամ խորհրդի նիստի գումարման պահանջ ներկայացնող անձը կարող են պահանջել նաև որևէ երրորդ անձի մասնակցությունը խորհրդի նիստին: Նման դեպքում խորհրդի նախագահը ծանուցում է ուղարկում նաև այդ անձին՝ պայմանով, որ խորհուրդն իր որոշմամբ կարող է մերժել այդ անձի մասնակցությունը խորհրդի նիստին:

- 5.4.10. Խորհրդի նիստի գումարման մասին խորհրդի նախագահը ծանուցում է խորհրդի անդամներին և այլ մասնակիցներին՝ նիստից առնվազն 5 (հինգ) օր առաջ, իսկ անհետաձգելի դեպքերում՝ նաև ավելի կարճ ժամկետում: Խորհրդի նախագահը պարտավոր է խորհրդի նիստ գումարել սույն կանոնադրության 5.4.8. կետում նշված անձանց պահանջն ստանալուց հետո ոչ ուշ, քան 10 (տասը) օր հետո:
- 5.4.11. Խորհրդի նիստն իրավասու է, եթե նիստին ներկա են խորհրդի անդամների կեսից ավելին:
- 5.4.12. Խորհրդի որոշումները խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կարող են ընդունվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով): Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների օգտագործմամբ, որոնք նիստի գումարման մասին ծանուցմանը ներկայացվող պահանջների պահպանմամբ խորհրդի նախագահի կողմից ուղարկվում են խորհրդի անդամներին: Խորհրդի նախագահը խորհրդի անդամներին նաև ծանուցում է լրացված քվեաթերթիկների ընդունման վերջնաժամկետի մասին, որը չի կարող քվեաթերթիկների ուղարկման պահից սկսած 10 (տասը) օրից պակաս լինել: Հեռակա քվեարկությամբ ընդունված խորհրդի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է խորհրդի անդամների կեսից ավելին:
- 5.4.13. Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:
- 5.4.14. Խորհրդի յուրաքանչյուր անդամ խորհրդի նիստերում քվեարկության ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ Խորհրդի նախագահի ընտրության և սույն կանոնադրության սույն կանոնադրության 5.4.15 կետում նշված հարցերով որոշումների:
- 5.4.15. Հետևյալ հարցերով խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի կողմից միաձայն.
- ա) Կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը կամ կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
 - բ) Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 (քսանհինգ) - 50 (հիսուն) տոկոսը կազմող արժեքով խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացումը:
- 5.4.16. Ընկերության խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հնգօրյա ժամկետում և ստորագրվում է նիստին մասնակցող անդամների կողմից, որոնք պատասխանատվություն են կրում արձանագրության մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

5.5. Ընկերության Գործադիր տնօրենը

- 5.5.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը: Ընկերության գործադիր տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրն Ընկերության անունից կնքում է Ընկերության խորհրդի նախագահը: Ընկերության գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալ(ներ):
- 5.5.2. Ընկերության գործադիր տնօրենն իրականացնում է հետևյալ գործառնությունները.
- ա) ներկայացնում է Ընկերությունը երրորդ անձանց հետ հարաբերություններում, պետական և այլ մարմիններում, այլ կազմակերպություններում.
 - բ) տնօրինում է Ընկերության գույքը և ֆինանսական միջոցները, Ընկերության անունից կնքում է գործարքներ.
 - գ) գործում է Ընկերության անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր.
 - դ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
 - ե) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության խորհրդի կողմից հաստատվող ներքին կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը.
 - զ) իրականացնում է Ընկերության գործունեության ղեկավարման հետ կապված այլ գործառնություններ, որոնց կատարումը վերապահված չէ Ընկերության մյուս կառավարման մարմինների իրավասությանը:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 6.1. Ընկերությունը հաշվապահական հաշվառումը վարում է ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:
- 6.2. Ընկերության գործադիր տնօրենը և գլխավոր հաշվապահը պատասխանատվություն են կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և այլ հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:
- 6.3. Ընկերության գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:
- 6.4. Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և վնասների հաշվետվության հաստատման ժամանակ Ընկերության վերստուգողի և արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը պարտադիր է:
- 6.5. Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է նախնական հաստատման Ընկերության խորհրդի կողմից բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:
- 6.6. Ընկերությունը ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ժամկետում մամուլում

հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը և արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը: Ընկերությունը հրապարակում է իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը (տասնհինգը):

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

7.1. Ընկերությունը ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացվում է Ընկերության վերստուգողի կողմից, որն իրականացնում է վերստուգիչ հանձնաժողովի (խմբի) գործառույթները:

7.2. Վերստուգողն ընտրվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ 3 (երեք) տարի ժամկետով: Վերստուգողը չպետք է ընդգրկված լինի Ընկերության որևէ կառավարման մարմնի կազմում:

7.3. Ընկերության վերստուգողն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) Ընկերության ֆինանսական փաստաթղթերի ստուգում, գույքագրմանը վերաբերող փաստաթղթերի վերլուծություն, նշված փաստաթղթերի համեմատություն առաջնային հաշվապահական հաշվառման տվյալների հետ.

բ) Ընկերության անունից կնքված պայմանագրերի, կատարվող գործարքների և կոնտրագենտների հետ կատարվող հաշվարկների օրինականության ստուգում.

գ) վարվող հաշվապահական հաշվառման՝ ՀՀ օրենսդրությանը և միջազգային ստանդարտների համապատասխանության վերլուծություն.

դ) Ընկերության ֆինանսական դրության, վճարունակության, ակտիվների լիկվիդայնության, սեփական և փոխառու միջոցների հարաբերակցության վերլուծություն և Ընկերության կառավարման մարմիններին ուղղված առաջարկությունների նախապատրաստում.

ե) բյուջե կատարվող վճարումների ճշգրիտ և ժամանակին կատարման, շահութաբաժինների վճարման, այլ պարտավորությունների մարման ստուգում.

զ) Ընկերության տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվետվության, ֆինանսական և այլ հաշվետվությունների կազմման ճշգրտության ստուգում.

է) Ընկերության խորհրդի, գործադիր տնօրենի, այլ ստորաբաժանումների կողմից ընդունված որոշումների՝ ՀՀ օրենսդրությանը, Ընկերության կանոնադրությանը և կառավարման մարմինների որոշումներին համապատասխանության ստուգում.

ը) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների վերլուծություն.

թ) օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

7.4. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան և եռամսյակային արդյունքների հիման վրա, ինչպես նաև կարող է իրականացվել վերստուգողի սեփական նախաձեռնությամբ, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, Ընկերության խորհրդի որոշմամբ կամ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 10 (տասը) և ավելի տոկոսին տիրապետող (այդ թվում՝ համատեղ) բաժնետերերի պահանջով:

7.5. Արտաքին աուդիտը

7.5.1. Յուրաքանչյուր տարի Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

- 7.5.2. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին նշանակում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, իսկ նրա վճարման չափը սահմանում է Ընկերության խորհուրդը:
- 7.5.3. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 (հինգ) տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում և վճարումը կատարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում՝ նրանք կարող են Ընկերությունից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե ստուգման արդյունքում բացահայտվել են Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող էական խախտումներ:
- 7.5.4. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսվի աուդիտորական եզրակացության, աուդիտորական հաշվետվության կազմում, ինչպես նաև Ընկերության կողմից ՀՀ Կենտրոնական Բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:
- 7.5.5. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրի դրույթները, բացառությամբ՝ պայմանագրի գնի, համաձայնեցնում է գործադիր տնօրենը, իսկ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

- 8.1. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:
- 8.2. Ընկերության պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 9.1. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
- 9.2. Ընկերությունը կարող է լուծարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Համարակալված, կնքված և կարված է:

14 (չափանշան) թերթ:

Իվ Լիցենզավորման ու գրանցման բաժնի պետ

անուն, ազգանուն ստորագրություն

վերահսկող:

անուն, ազգանուն ստորագրություն

